

տեսություն: Այդ յօդուածում ասուած է, որ այդ դասարանի Հայոց լեզուի, Ռուսաց լեզուի և թուրքերէնի դասատուն պիտի լինի ծագումով հայ: Այդ դասարանը յատկացուած է այն հայ մանուկներին, որոնք ո՛չ դպրոցական սկզբնական կրթութիւն ունին և ոչ էլ գիտեն ուսերէն: Այդ դասարանը պիտի կրի՝ «նախակրթական բաժին մատուցող հայ երեխաներու կազմակերպիչ» անունը:

Այս նախակրթարանը յիշատակուած պայմաններով ու ծրագրով գործել է մինչև 1917/18 ուսումն. տարուայ վերջը: Այնուհետև, Հոկտեմբերեան յեղափոխութեան հետևանքով ձեւարանի գոյութեանը վերջ տրուեց և ձեւարանը վերածուեց «Հայ Մշակոյթի տան»...:

1887 թ., երբ մենք մտանք Լազարեան ձեւարանի առաջին դասարանը, նախակրթարանի յիշեալ առարկաների դասատուն էր, ձեւարանի նախկին սան, անուանի բանաստեղծ Սմբատ Շահագիրը: Երբ սա 1897 թ. թողեց վերջնականապէս ձեւարանը, նրան փոխարինեց Կարապետ Կուսիկեանը, որպէս Հայոց լեզուի դասատու ու նաև նախակրթարանի դասատու: Այս վերջին պաշտօնը, նրա մահէն յետոյ, ևս ստանձնեցի, որը և վարեցի մինչև 1917/18 ուսումն. տարուայ վերջը:

Երկու խօսքով անդրադառնալով այդ դասարանի պատմութեան, ասենք, որ Շահագիրի օրօք նախակրթարանը բաղկացած էր երկու բաժանմունքից՝ այբբենական, անգրագէտ մանուկների համար, և աւագ բաժանմունքից. երկուսն էլ գետնուած էին մի դասարանի մէջ և ուսուցիչը պարապում էր միաժամանակ երկու բաժանմունքների աշակերտների հետ:

Հետագայում այբբենական բաժանմունքը գատուեց ու կազմեց առաջին նախակրթարան դասարան, ուր դասաւանդում էր ձեւարանի վերակացու Ստեփան Տէր-Սարգսեանը:

Իմ օրօք կատարուեց երկրորդ բարենորոգումը:

Նկատելով, որ երկու նախակրթարանների աշակերտները երկու տարուայ ընթացքում ի վիճակի չեն լինում ձեռք բերել բարար չափով գիտելիքներ ու զարգացում, ինչպէս և իւրացնել ուսաց լեզուն, որպէս զի կարողանան յաջող կերպով առաջին դասարանի դասընթացը, որն այդ ժամանակ ունէր շատ բարդ ծրագիր՝ դասաւանդում էին լատիներէն և հայերէն գրարար լեզուները, բայց ընդհանուր առարկաներից, ևս առաջարկեցի, յատուկ գեղոյց ներկայացնելով ձեւարանի տեսչութեան և Մանկավարժական Խորհուրդին, բացանել նաև միջին նախակրթարանի երկու տարուայ դասընթացը վերածել երեք տարուայ:

Առաջարկս հաւանութիւն գտաւ և բացուեց Միջին նախակրթարան դասարանը յատուկ ծրագրով. այդ դասարանի դասաւանդութիւնն էլ յանձնուեց ինձ:

Այսպէս շարունակուեց մինչև 1917/18 ուս. տարուայ վերջը:

Յիշատակենք, որ աւագ նախակրթարանի դասարանում կախուած էր Մանուկ Յովհաննէսի խղաների նկարը:

(Շարունակելի:)

ԹՐՆԿԵՐԵՆ ԳԵՐԳԵՍՏԵՆԸ

(Շարունակութիւն և վերջ:)

3. ԱՆՈՒՆԻ ԹՐՆԿԵՐԵՆԵՐ

Գրեգոր Խոսեայ Թրնկերեանի առաջին և երկրորդ սերունդի վրայ խօսելի վերջ՝ հարկ կը համարինք հոս շեշտել որ արդէն 1800ի սկիզբը Թրնկերեան գերդաստանի ընտանեկան ծառը իր բազմատարած ճիւղերով ու սողարթալից ստերովը ստացած էր այնպիսի ընդարձակածաւալ մեծութիւն մը, որունց բազմաթիւ անդամները մերթ հոս և մերթ հոն կը յիշուին, յաճախ առանց իրարու հետ մերձաւոր կապ մը մատնանշելու: Կան Թրնկերեաններ, որոնց Թրնկերեան բունին հետ ունեցած մօտաւոր կամ հեռաւոր ազգերը բոլորովին անծանօթ կը մնայ:

Ապացոյց մը չենք գտած, բայց հաւանական է որ Թրնկերեաններն մաս մը ոչ-կաթողիկէ առանձին ճիւղի մը վերաբերի: Աւելի հաւանական է որ Թրնկերեանց Պոլիս գաղթիւնն վերջ՝ այն Թրնկերեան ընտանիքի ուրիշ անդամներ Անկիւրիա մնացած ևս անոնցմէ ոմանք յետոյ հոս հոն ցրուած ըլլան:

Ասիկա կ'ըսենք՝ բացատրելու համար գոյութիւնը անծանօթ մնացած Թրնկերեաններու բաւական մեծ թիւի մը:

Այս գլխոյն տակ պիտի ամփոփենք անունները բոլոր այն Թրնկերեաններու, որոնք որեւէ առթիւ կը յիշուին, բայց անծանօթ կը մնայ իրենց կապը Թրնկերեան ծանօթ տոհմերուն հետ:

1. 1782 Օգոստ. ամսոյն Վենետիկի Միխիլ. Վանքը երկու օր հիւր եղած է Գրիգոր Տնկուեան ⁶⁸: Հաւանօրէն նոյն անձն է, որ Ղեւոնդ Թրնկերեանէ Գրիգոր վարդապետ կը կոչուի և է որդի Կարապետի (որդւոյ Գրեգոր Խոսեայի):

2. 1819ի Տիւրքիստանի ծանօթ զէպէին առթիւ ձերբակալուած 3 Թրնկերեաններ կը յիշուին. «Միխայէլ, Գրիգոր և Վիլհելմ Աղայի Թրնկերեանց ⁶⁹», որոնց մասին ոչ մէկ բացատրութիւն կը գտնենք: Միքայէլը չի կրնար Յովսէփ Ամիրայի նոյնանուն որդին ըլլալ, քանի որ վերջինս 1807ին ծնած ըլլալով ⁷⁰ 1819ին տակաւին 12 տարեկան աղայ էր: Գրեգորը կրնայ Սիմոն Թրնկերեանի նոյնանուն որդին ըլլալ, որուն ծնունդի թուականն է 1785, 1827ին կը ներկայանայ իրրեւ տարիքը առած մարդ և Թրնկերեանց պետերէն մին ⁷¹: Իսկ Վիլհելմ Թրնկերեան, Գրեգոր Խոսեայի որդի Յովհաննէսի որդին է, որուն ծնունդի թուականն Արքեպիսկոպոս կը բարձրացնէ Հասունեան Արքեպիսկոպոս կը բարձրացնէ չէնք մը, Անարատ Յղութեան Մայրապետներու աղջկանց վարժարանի համար (Յովհաննէս Արք. Նազիեան, Պատմական տեսութիւն Անարատ Յղութեան հայ Գոյրերու Միաբանութեան վրայ. Պէյրութ 1948, էջ 43):

Իր մասին յետոյ:

3. Ինչպէս յիշատակած ենք՝ Գէօրգիան 1815ին Պետրոս Թրնկերեան մը կը յիշէ ⁷², որ իր աղջիկը տուած է Արքիմ Պիլեգիկի:

Իր մասին ուրիշ ծանօթութիւն չունենք:

4. Հ. Մահակ Վ. Սրապետի քով ևս կը հանդիպինք Պետրոս Թրնկերեանի մը ⁷³, որ մեռած է 1856ին և որուն մասին ոչ մէկ տեղութեան կը հանդիպինք:

⁶⁸ Գիւլան Վիլհելմ. Միխիլ. 1782:
⁶⁹ Չեռապիլ Վիլհելմ. Միխիլ. Մատենագարանի:
⁷⁰ Հմմտ. Մէծմ. Հով. 1865, թ. 627:
⁷¹ Տե՛ս Պէյրութեան, Պատմ., էջ 190:
⁷² Օրագրութիւն, 1815 Մարտ 14:
⁷³ Ս. Յակոբ աղլ. Հիւ., անդ՝ էջ 445:

5. 1830ին հագիւ կը հնչէ ազատութեան ձայնը՝ Պոլիս գտնուող Հայ Կաթողիկէները կը գումարեն 1830 Ապրիլին անդրանիկ Ազգ. ժողովը և կ'ընտրեն 8 անձեր, որոնք կը կոչուին «Գործակալք Ազգին»՝ վարելու համար ընթացիկ գործերը Հայ Կաթ. Համայնքի: Այդ փոքրիկ ցանկին մէջ է նաև «Թրնկեր Պետրոս» մը, իրրեւ երրորդ անգամը Հայ Կաթ. գերագոյն վարչական Մարմնոյն: Ո՞վ է, ի՞նչ ծագում և կապակցութիւն ունի Թրնկերեան Գերդաստանի հետ — ոչ մէկ ակնարկութիւն կ'ըլլայ նամակի մը մէջ, որ կը խօսի այդ պատմական ժողովրդի վրայ ⁷⁴: Իր պատմական արժէքին համար կու տանք ընտրուողներու այդ ցանկը. «1. Ազնաւոր Գէորգ. 2. Հիւսապէրոսի օղլու Պետրոս. 3. Թրնկեր Պետրոս. 4. Խըճի Վիլհելմ. 5. Մալբը Գրեգոր. 6. Պօլուճու Խաչատուր. 7. Արգար Յակոբ. 8. Սաքայեան Միլթոն»:

6. 1803 Յուլ. 13ին Վիեննայի Հայերէն երկու հոգի Տրիեստ Միխիլարեաններուն իրաւերէն նամակ մը կը գրեն, որոնցմէ մէկուն ստորագրութիւնն է Tomaso di Tinghir ⁷⁵:

7. 1811ին Հայոց և Յունաց մէջ վէճ կար Երուսաղէմի Ս. Յակոբ Վանքի մասին: Յոյները կը ջանային զանազան միջոցներով տիրանալ անոր: Յովհաննէս Պատրիարք աղլ. կարեւոր այս խնդրոյն մէջ յաջողութիւնը ապահովելու համար Առաքել Տատ Ամիրայի միջոցաւ Հայ Կաթ. մեծամեծներն ալ կը հրաւիրէ «միաբանիլ ընդ իւրեանս այս հոգեւոր գործ ազգասիրութեան ⁷⁶»: Գումարուած Համագոյցին ժողովքին կը մտնակցին Հայ Կաթողիկէներու կողմէ Յովհաննէս Չէլչլի Տիւրքեան, Մոնիսի Միլիս Թրնկերեան, Անտոն Գրեճեան և ուրիշներ ⁷⁷: Հայերը իրենց համերաշխ գործակցութեամբ ու միահամուռ ջանքերով կը յաջողին Սուլթանէն յատուկ հրովարտակ ստանալ թէ Ս. Յակոբ Հայոց կը վերաբերի և ոչ ոք անկէ վերջ իրաւունք պիտի ունենայ խնդիր ընելու այդ մասին:

1811ին Թրնկերեաններ շատ ու շատ կան. անոնց կողմէ իրր ներկայացուցիչ Հայ Ազգ. ժողովրդի մը մասնակցօրը՝ ենթագրել կու

⁷⁴ Գիւլ. Վիլհելմ. Միխիլ. 1830 Ապրիլ 10:
⁷⁵ Գիւլ. Վիլհելմ. Միխիլ. 1803:
⁷⁶ Պէյրութեան, անդ՝ էջ 61:
⁷⁷ Անդ:

հետ՝ ունի 2 զուակ. Յովհաննէս եւ Իրեմէ, որոնք ներկայիս Յրանսա են: Պետրոս ամուսնացած է Ursula-ի հետ, իսկ Նաթալիա՝ Guy Sauvage-ի հետ: Վերջինս ունի երկու աղջիկ. Chantal եւ Christine:

Յակոբի անդրանիկը՝ Մկրտիչ (ծն. 7 Նոյ. 1871) եղած է Պոլսոյ Bourse de Consolide-ի ընդհանուր քարտուղար: Ներկայիս նրա կը գտնուի: Ամուսնի է:

Յակոբի երրորդ զուակը՝ Ղեւոնդ Յովհաննէս՝ վաղամեռիկ եղած է. ծնած է Պոլիս 1874 շոկտ. 1ին եւ մեռած 1877 Նոյ. 8ին: Միքայէլ (ծն. 21 Յունուար 1873 մեռ. 1939 Մարտ 21) եղած է փոխ-տնօրէն Թուրքիոյ Գերմանական դրամատան: Ամուսնացած է Լիւսի Տէրտէրոֆի հետ եւ ունեցած երկու զուակ. Constantin եւ Frederik:

Յակոբի զուարթը՝ Արուսեակ՝ մտած է Oblates de l'Assomption Միարանութեան մէջ եւ կոչուած Soeur Hostia: Ներկայիս Բեղզիա է:

Յակոբ Թընկերեանի մէկ Յիշատակագրութիւնը կայ Ղալաթիոյ Ս. Փրկիչ եկեղեցոյ որմերուն մէջ գեանդուած մարմարեանի մը վրայ, որ թէ՛ ընտանեկան տապանագիր է եւ թէ՛ նշան նոյն եկեղեցոյ եղած նուիրատուութեան մը:

Ահա այդ Յիշատակագրութիւնը. Թնկերեանց անիւն ոսկերաց սիրելեաց Թացցեն կարեկից արտասուք եւ հանգիցեն հոգիք նոցա ի խաղաղութեան

Ղեւոնդ Յովհաննէս Թնկերեան որդի Յակոբայ Թնեալ ի Կ. Պոլիս 1 շոկտ. 1874. փոխեալ ի 8 Նոյեմ. 1877.

Յակոբ Թնկերեան որդի Մկրտչի ծնեալ ի Կ. Պոլիս 22 Յուն. 1839 Փոխեալ ի Սիւրբի 21 Նոյեմ. 1909. ի Տօնի Ընծայման կուսին.

Առփիա Թնկերեան կողակից Յակովբայ դուստր Միքայէլի Խուտիկեան եւ Սրբուհոյ Տաւուտեան ծնեալ

1845 Յունուար 15. վախճանեալ ի Քաղկեդոն. յամի 1914 Յունիս 11 «Մայիս 29» ի Տօնի Ամենասուրբ Հաղորդութեան 106:

106 Հ. Յակոբ Ծ. Վ. Բօսան, անդ՝ էջ 258:

3. Յակոբ Ամիրա Թընկերեանի որդին՝ Բէն Արրահամ 1827ի աքսորքի առաջին օրը պահուած էր Գրիգորիկին հետ եւ դժուարաւ համոզուեցաւ քարել ամէնուն հետ: Աքսորքէն յետոյ կը յեռուի Պոլսոյ Հայ Կաթ. հին հիւանդանոցի ժանտախտաւ որներու ցանկին մէջ: Զինքը խնամած է Անտոնեան վարդապետներէն Հ. Աթանաս Տօղրամաճեան, որ նամակի մը մէջ այդ մասին գրելով՝ կ'ըսէ որ 1831 շոկտ. 1ին խնամեցի «որդի Թնկերեան Օղլու Յակոբ Աղայի, որ է Արրահամին¹⁰⁷»:

Ղեւոնդ կը տեղեկացնէ որ Արրահամ (ծն. 1793 մեռ. 1892) ամուսնացած է Լուչիա Մարուշի հետ եւ ունեցած Յակոբ անունով մանչ մը, որ Աղեքսանդրիա (Եգիպտոս) հաստատուած եւ նոյն տեղոյ մաքսատան ընդհանուր տնօրէն եղած է: 1923ին քաշուած է գործէ: Ամուսնացած էլիզա Զրպիի հետ՝ ունի երկու աղջիկ եւ մէկ մանչ. Լիւսի, Ալիս եւ Եղուարդ: Արրահամի զուակներն են նաեւ. Թերեգիկ, Տուտու, Իսկուհի, Աննա եւ Կատարինէ:

Իսկուհի թոռն է իրաւագիտութեան Դոկտոր՝ Տիրան Պէյ, Բերլինի Թուրքիոյ գեապանի խորհրդականը: Իսկ Աննա՝ ամուսնացած է Յովհաննէս Հիւրմիւզի (Ապուսլլահեան, Ինճիճի-օղլու) հետ, որ եղբորորդին է երկու Արքեպիսկոպոսներու — Գէորգ եւ Եղուարդ — որոնցմէ մին Վենետիկ Միտիթա-րեանց Արրայ: Աննայի Գէորգ, Արտաշէս եւ Արփինէ զուակներէն Արտաշէսը ամուսնացած է Միքայէլ Փորթուզալ Փաշայի զուարթ Ասեթի հետ:

4. Յակոբ Ամիրա Թընկերեան ունեցած է բացառիկ գեղեցկութեամբ օժտուած դուստր մը — Վերոնիկա (ծն. 1808 մեռ. 1873): Իր տան դրացի էր այն ատեն Վալաքիոյ Կառավարիչ (Hospodar) Գրիգոր Ը. ի որդին՝ Կոստանդին Ղեկա (Gheka) Իշխանը, որ տեսնելով Վերոնիկան՝ կը համակրի ու ձեռքը կը խնդրէ: Թէեւ ամուսնութեան դժուարութիւն մը կար — մանչուն եւ աղջկան կրօնական տարբերութիւնը — սակայն աղջկան մայրն ու եղբայրները — բացի Արթին Ամիրայէն — կը համաձայնին պակար օրթոգոքս ձէտով կատարել տալ: Ընդգծենք որ Hospodar (Իշխան, կառավարիչ) ըլլալու պայման էր օրթոգոքս ձէտը:

107 Դիւան Անտ. Տփ. 74 տ. Հ. Սահակ Վ. Սրբապեան, անդ՝ էջ 35:

Ամուսնութիւնը տեղի կ'ունենայ: Պատկէն վերջ նորապսակ ամուսնը կը մեկնի: Արթին Ամիրա սակայն կը զայրանայ եղածին վրայ ու ամէն միջոց գործ կը դնէ զանոնք բաժնելու համար: Մէկ պայմանով միայն կը համաձայնի պակարին — եթէ երեսասարդը հաւանի կաթողիկէ դառնալու, ինչ որ անհարկն էր, քանի որ երեսասարդ իշխանը Սուլթանի քով պատանդ էր:

Արթին իր դժկամակութիւնը Սուլթանին ականջը կը հասցնէ: Սուլթանը կը կարգաւորէ որ բաժանուած տեղի ունենայ. ինչ որ իրապէս ալ կ'ըլլայ: Բայց յետոյ երբ կը տեղեկանայ թէ Վերոնիկա չի կրնար ամուսնին մասէն առաջ ամուսնանալ՝ կը բարկանայ...:

Այս մանրամասնութիւնը կը քաղենք Ղեւոնդ Թընկերեանի յիշեալ նամակէն:

Վերոնիկայի մասին կայ նաեւ ժամանակակիցի մը նամակը, ուր կը կարդանք. «Թընկեր Վերոնիկայի աքսորման ողբերգական պատմութիւնը ալ այս է: Ուրհէ եւ Պուլտան Պէյերու որդիքը Պոլիս պատանդ էին: Վերոնիկա Վալաքիոյի Պէյպատէին կը բարեկամանայ, կը սիրահարուին իրարու եւ իստատանան ամուսնանալ: Ապրիլ Տին (1827), Ծագկազարդի գիշերը, Պէյը քանի մը ծառայով պալատէն Քուրուշէմէ կու գայ, մը պատէ ժամուն կը փախընէ ժամողիւր աղջիկին իր պալատը, ուր ըստ պատրաստութեան ամենաքեղ հարսանիք կը կատարուի: Աղջկան ծնողքը թէպէտ կ'իմանան, սակայն զիշերն անկարող ըլլալով զիմում ընել, առտուն իրենց մեծ պաշտպան Սուսրէվ փաշային կը դիմեն եւ թագաւորին կը ծանուցանեն, որ իրենց իբր թէ 12ամեայ անչափահաս եւ յիմար աղջիկը յափշտակած է Պէյը հաս եւ յիմար աղջիկը 20 անցած եւ խորագէտ (թէպէտ աղջիկը 20 անցած եւ խորագէտ էր): Թագաւորը կը հրամայէ որ աղջիկը հօրը դարձուի եւ Պէյն հայրենիք աքսորուի: Երրորդ օրն այր եւ կին վէղերին ատեանը կը հանուին: Պէյը կնոջը ձեռքէն բռնած կը ներկայանայ եւ չուզեր բաժնուիլ. հաղիւ սպիտակելով եւ բռնութեամբ ձեռքը կը բաժնեն եւ աղջիկը կը յանձնեն հօրը: Պէյը կը կատարուի, երեք ամբաստանագիր կու տայ թագաւորին, բայց անօգուտ. քանի մ'օրէն հայրենիքը կը զրկուի: Իսկ աղջիկը Զէնկէլէօյ տուն մը կը պահեն, ուր անիկայ միշտ կը պնդէ թէ էրեկը կը պահանջէ: Ամսէ մը կը հիւանդանայ սակ եւ իբր թէ թագաւորին հրամանաւ Անկիւրիա

կ'աքսորուի որ ըզգատանայ: Այսպիսի դէպքեր անսովոր չէին ոչ միայն կաթողիկէից քով, որոնք Իտալացոց եւ Անգլիացոց հետ կ'ամուսնանային, այլ նաեւ նոյն միջոցներուն քանի մը դէպք ալ Հայոց քով եղած է: Ինչպէս՝ Տէրտէրի մ'աղջիկին Անգլիացոց մը հետ կ'ամուսնանայ, Հայոց մէջ մեծ խոտովութիւն կ'ըլլէ, մինչեւ Պատրիարքը զաղջիկը կը յափշտակէ Անգլիացոց անէն եւ նաուը դափու հիւանդանոց կը բանտարկէ, մինչեւ որ Անգլիոյ գեսպանն աղջիկը կ'ազատէ եւ կ'ըրանը կը յանձնէ» (Դիւ. Վիենն. Միտիթ. 1827 շոկտ. 25):

Ինչպէս կը տեսնուի՝ Վերոնիկա Անկիւրիա էր, երբ 1827 շոկտ. ին ծնողքն ու եղբայրները Սերասիա կ'աքսորուին:

5. Յակոբ Ամիրայի որդին՝ Գրիգոր՝ յիշեցինք թէ ինչպէս ընդգրկուած է աքսորքի երթալ: Նախ կը պահուի եղբորը՝ Արրահամին հետ. երբ թագաւորը երեւան կ'ըլլէ՝ չուզեր հետեւիլ աքսորքի կարաւանին, բայց ի վերջոյ տեղի կու տայ եւ կը խառնուի իրեններուն: Ըամբու ընթացքին, երբ արդէն օրուան մը հեռաւորութեան մէջ կը գտնուէին՝ պատէ ստիթ կը գտնէ եւ խոյս կու տայ: Ի՞նչուր կ'անցնի փնտտուքը: Շատ ուշ միայն իրազեկ կ'ըլլան թէ Պարիս անցած է:

Իր ապագայ կեանքի մասին չկրցանք տեղեկութիւն մը ձեռք բերել:

6. Իգնատիոս, Յակոբ Ամիրայի որդին, յիմար կը ներկայացուի եւ իբրեւ սցոպիստ՝ աքսորքէն կ'ազատի:

7. Յակոբ Ամիրայի կրտսեր որդին՝ Միքայէլ՝ աքսորքի միջոցին տնէն բացակայ, Ռուսիայի Վալիին քովն էր. անկէ բերել տալով կը զրկեն աքսորքի, բայց ո՛չ թէ Սերասիա, իր ծնողաց քով, այլ Անկիւրիա, ինչպէս կը հաստատէ 1828ին նամակ մը (Դիւ. Վիենն. Միտիթ. 1828 Յուլ. 28), ուսկից, ինչպէս յիշած ենք, վերագարծը կը յետաձգուի: Իր մասին ուրիշ կողմէ ծանօթութիւն կը պակասի: Նոյնտունն որդի մ'ունի իր հօրեկոյրը՝ Յովսէփ Ամիրա:

8. Յակոբ Ամիրայի ութերորդ զուակը աղջիկ մըն է, Պրիճիտա, որ 1827ի ընտանեկան աքսորքի միջոցին կը փախչի Բերա, կատարներու Ս. Աստուածածին եկեղեցին, անկէ ալ կ'անցնի «Միւսի Թէսպայի» տունը. այսինքն՝ Աւստրիոյ գեսպանատունը: Ըստ

Այս չնքերու կառուցումը 1866ին կա-
ւարտի եւ նոյն տարւոյ Յունիս 24ին, այն է՝
Ս. Յովհ. Մկրտչի ծննդեան տօնին — Անուա-
նակից Պաշտպանին Գույումճեան եւ Թըն-
կըրեան Յովհաննէսներու — տեղի կ'ունենայ
եկեղեցւոյ օծումը: Օծման հանդիսական ա-
րարողութիւնը կը կատարէ Հասունեան Ար-
քեպիսկոպոս՝ առնթիւ Կաթողիկոսութեամբ Ան-
տոնեան Միաբանութեան Արքայ Սիւքիաս
Արք. Գազանճեանի, Արքուինի Առաջնորդ
Անտոն Եպ. Հարաճեանի եւ Ստեփան Վ. Ազա-
րեանի, ինչպէս նաև 25 քահանաներու մաս-
նակցութեամբ: Օծման կը յաջորդէ հանդի-
սական Չայնաւոր Պատարագը, որմէ վերջ
տեղի կ'ունենայ Հոգեհանգստեան պաշտօն
Թընկըրեան Գերդաստանի համօրէն ննջե-
ցեալներու համար:

Կրօնական արարողութիւններէ յետոյ բո-
լոր ներկայ մեծամեծները եկեղեցւոյ շէնքը
եւ յարակից բաժինները միասին գններով
չատ կը հանին ու ամէնքը կը շնորհաւորեն
Յովհաննէս Թընկըրեանը:

Եկեղեցին նուիրուած էր Ս. Յովհաննէս
Մկրտչի անուան եւ շինուած գոթական ճար-
տարապետութեամբ, ունենալով իր մէջ ա-
մէն հնարաւոր զարդեղէնները, եկեղեցական
սպասներն ու զգեստեղէնները:

Նոյնպէս զպրօքը շինուած էր իր բոլոր
կազմաներովն ու զպրօքական պիտոյքնե-
րովը:

Ժամանակակից մը հետեւեալը կը գրէ
եկեղեցւոյ մասին. «Եկեղեցւոյն ամէն սպաս-
ներուն վրայ կը փայլէին ճօխութիւն, պար-
զութիւն եւ ընտրութիւն արտօնակի... Իսկ
եկեղեցւոյն ճարտարապետութեան կոկիկու-
թեան գալով, չենք կրնար ըստ բաւականին
գովել. փայտուղ գոթացի ձեւով շինուած՝
ամենայն ինչ արտօնակի եւ սիրելի կ'ընծայի
ի նմա աչաց. գեղեցիկ են եւ խորաններուն
պատկերները, զորոնք մասնաւոր դիտմամբ
խրախոյս տալու՝ շինել տուած է ազգային
համեմարեղ երիտասարդի մը, որուն անունը
ծանօթ է ամէնուն... 130 երկու աւանդատուն
ունի եկեղեցին. եւ եկեղեցատունն ընդար-
ձակ է եւ աղուր... շինուած է եւ զպրա-
տուն մը ի պէտս գեղին ազգային տղոց.
ունի եւ պարտէզ եւ պատով շրջապատուած
է եկեղեցւոյ սահմանը 131»:

130 Գծարարար չի տար անունը հայ հանձա-
րեղ նկարչին:
131 Մէնս. Հավ. 1866, Թ. 659:

Եկեղեցւոյ օծումին առթիւ թանկագին
նուէր մը զրկած էր Ս. Պապը. մեծագին
նուէրներ կ'ընեն նաև Պօղոս Պէյ Տիւղեան,
Յովհ. Թընկըրեանի եղբայրը՝ Եավէր Փաշա
եւ ուրիշներ:

Պատարագէն վերջ մեծ խնջոյք մը տուած
է Յովհ. Թընկըրեան իւր սեպհական տան
մէջ, ուր ներկայ եղած են Հասունեանէ եւ
միւս Եպիսկոպոսներէ զատ՝ հայ եւ օտար
մեծամեծներ, որոնք յետոյ հրաւիրուած են
Յովհաննէս Թընկըրեանի եղբոր՝ Բուզանդի
տունը՝ նախընթիւն:

Այդ օրը Հայ Կաթ. Հասարակութեան
համար անմոռանալի օր մը եղած է:

Թէ՛ եկեղեցւոյ եւ թէ՛ զպրօքի նիւթա-
կան ծախքերը ապահովելու համար, Յովհ.
Թընկըրեան կալուածներ կապեր է անոնց,
թաղին ժողովրդեան ալ մեծ նպաստ մ'ըրած
ըլլալով:

Երկար տարիներ սյդ եկեղեցւոյ մեծա-
ւոր — ժողովրդապետ եղած է Վիեննական
Միթիթարեան մը՝ Հ. Եփրեմ Վ. Չաքրեան,
որ ոչ միայն խնամով մատակարարած, այլև
չատցուցած է եկեղեցւոյ կալուածները:

Յովհաննէս Թընկըրեան եկեղեցւոյ պար-
տէզին մէջ Դամբարան մը շինել տուած է
իր Գերդաստանի անդամներուն համար, ուր
թաղուած են յետոյ շատեր: Նոյն պարտէզին
մէջ յատուկ Դամբարան մ'ալ ունեցած է
Յովհաննէս Գույումճեան իր Գերդաստանին
համար 132:

Յիշենք նաև որ Եէնիքէօյ կարեւոր
կենդրոն մ'եղած է Հայերու համար: «Նշա-
նաւոր հայերու, ամիրաներու ամարանոցը
հոս եղած է. հոն ապրած են Թընկըրեաններ,
Գույումճեաններ, Տատեաններ, Արզումա-
նեաններ, Տէմիրճիպաշեաններ եւ ուրիշ-
ներ» 133:

Յովհաննէս Թընկըրեանի ընտանեկան
կեանքի մասին տեղեկութեան մը չենք հան-
դիպած: Որքան կ'երեւայ՝ ամուսնացած էր.
իր եղբոր՝ Եավէր Փաշայի թաղման առթիւ
կը յիշուի Եավէր Փաշայի «մեծ եղբորը-
դին՝ Պաթիստ Պէյ», որ հիւրընկալութիւն
կ'ընէ 134: Եավէր Փաշայի մեծ եղբայրը
Յովհաննէս Թընկըրեանն է: Հետեւաբար
Պաթիստ (Մկրտչի) Յովհաննէսի որդին է:

132 Մէնս. Հավատիս, 1866, Թ. 652: — Տօթ.
Վահրամ Յ. Թորգոմեան, անդ՝ էջ 704:
133 Թորգոմեան, անդ:
134 Արեւիկ, Կ. Պ. 1908, Թ. 6761:

Իր որդիներն են հաւանօրէն նաև Ժո-
զէֆ (Յովսէֆ), Բասալ (Յարութիւն) եւ
Բիէն (Պետրոս) Թընկըրեանները, որոնք Եա-
վէր Փաշայի թաղման առթիւ սգակիր են եւ
իր եղբորորդիները 135: Ասոնց անդրանիկը
Յովսէֆ է, որ 1872—1889ի շրջաններուն
Ս. Յակոբի Հողարարձուներու կամ անոր
համար կազմուած Յանձնախումբերու մէջ կը
յիշուի 136:

Յովհաննէս Թընկըրեան՝ կեանքին վեր-
ջերը անդամալուծական անրոժելի հիւան-
դութեան մը կը բռնուի, որուն հետեւու-
թեամբ 1868 Նոյ. 10ին, իրեկուան գէմ, կը
կնքէ իր մահկանացուն: Մասիս 137 սա խօս-
քերով ծանուցած է այդ մահը. «Պետութեան
Սորհրդոյ անդամ Թընկըրեան Վսեմ. Յօհան-
նէս էֆ., որ քանի մը շարաթէ ի վեր ան-
նէս էֆ., որ քանի մը շարաթէ ի վեր ան-
նէս էֆ. անդամալուծական հիւանդութեան
մ'ենթակայ եղած էր, կիրակի իրեկուան
(Նոյ. 10) իր մահկանացուն կնքեց»:

Թաղումը տեղի կ'ունենայ զինուորական
նուագախումբի մասնակցութեամբ: Ներկայ
կ'ըլլան Բ. Գրան, սրտերազմական եւ ասե-
տրական Նախարարութեանց, Պետական Սոր-
հրդան Նախարարութեանց, Պետական Սոր-
հրդոյ, արդարութեան դատարանի անդամ-
ներ, ազգային եւ օտար բարձրաստիճան ան-
ներ: Մարմինը առժամանակայ կերպով կը
ձեր: Մարմինը առժամանակայ կերպով կը
նախապէս թաղուած էին իր եղբայրները՝
Միքայէլ եւ Արիկ, ինչպէս նաև իրենց
մայրը՝ Լուցիքա: Ապագային ասոնք բոլորը
կը փոխադրուին Եէնիքէօյի Գերդաստանի
Դամբարանը:

Մէնս. Հավատիս 138 Յովհ. Թընկըրեանի
մահուան առթիւ կը գրէ. «Ամէնքը կը վկայէին
միաձայն թէ հանգուցեալը ազնիւ ծնաւ, սյ-
նիւ ապրեցաւ եւ ազնիւ մեռաւ»:

Յովհ. Թընկըրեանի մահը իմացնելով՝
Պոլէն Իզմիր կը գրեն. «Մայրաքաղաքին
Հայ Կաթոլիկ երեւելեաց դասը, ինչպէս նաև
բոլոր ազգը մեծ կորուստ մի ըրաւ անցեալ
շաբթու (1868 Նոյեմբեր): Վսեմաշուք Թըն-
կըրեան Յօհաննէս էֆ. զկնի ութօրեայ հիւան-
դութեան մի, իւր մահկանացու ընթացքը
կնքեց ի հասակի 70 ամաց: Հանգուցեալը
ստաջին կարգի պաշտօնատար եւ Ծուրայի

135 Անդ. — Մէնս. Ա., Թ. 4551:
136 Հ. Սահակ Վ. Սրապեան, անդ՝ էջ 144, 162:
137 1868, Թ. 262:
138 1868, Թ. 770:

տէվէթին անդամ էր: Իւր կենցաղագէտ
հմտութիւններովը եւ իւր հարստութեամբը,
զոր ի բարին կը գործածէր՝ մեծ յարգ եւ
համարում ստացած էր թէ՛ բարեխնամ տէ-
րութեան եւ թէ՛ ազգին առջև 139»: Յով-
հաննէս Թընկըրեան ունէր Պալալի աստի-
ճան:

2. Յովսէֆ Ամիրայի որդին՝ Պետրոս
(ծն. 1813) ուրիշ Թընկըրեաններու հետ հա-
ւանօրէն մասնակցած է 1838ի ազգային կա-
րեւոր ժողովքին 140:

1858ի Նոր տարւոյ եւ Մկրտութեան սօ-
ներու առթիւ Հայ Կաթ. Համայնքի Ազգա-
տանոցին նուիրատուութիւն ըրած են Յով-
սէֆի Ամիրայի որդիքը. Բուզանդ, Պետրոս
եւ Եավէր Փաշա 141:

Պետրոս նախ ամուսնացած է Տիրուի
Շեխրեանի հետ եւ ունեցած վեց զաւակ,
որոնցմէ Յովսէֆ եղած է Արտաքին Գործոց
Նախարարութեան թղթակցութեան դրասե-
նակի անդամ: Երկրորդ անգամ ամուսնա-
նակի կատարին Սեդրոսեանի հետ, որ
ցած է կատարին Սեդրոսեանի հետ, որ
վախճանած է 1912ին: Պետրոս Թընկըրեանի
մահուան թուականը անծանօթ է:

3. Բուզանդ Թընկըրեան (Բուզիկ) իր
եղբոր՝ Յովհ. Թընկըրեանի պէս ազգային
մեծ գործիչ եղած է յաճախակի մասնակցե-
լով Հայ Կաթ. Ազգ. Վարչական գործերու:
Հասունեանի զաղափարակից ըլլալով 142,
կարեւոր դեր ունեցած է այդ խումբի գոր-
ծունէութեան մէջ:

1855 Մարտ 2ին դումարուած Ազգ. Ժո-
ղովքէն կ'ընտրուի Երկոտասանից ժողովի
անդամ 143:

1863 Սեպտ. 26ին Ազգ. Ժողովքէն ըն-
տրուած տասը Երեսփոխաններէն մին է,
որոնք կը ներկայացնեն Հայ Կաթ. Համայնքի
վարչական Գերագոյն Մարմինը 144: Նոյնը
նաև 1865 Օգոստոսին 145:

1872—1874ին եղած է Ս. Յակոբ Հիւան-
դանոցի Հողարարձու 146:

139 Արշալոյս Արարատեան, 1868, Թ. 845:
140 Յ. Ասկէրեան, անդ՝ էջ 41:
141 Մէնս. Հավ. 1858, Թ. 224:
142 Հմմտ. Ասկէրեան, անդ՝ էջ 270: — Մէնս.
Ա. 1910, Թ. 4776:
143 Ասկէրեան, անդ՝ էջ 362: — Հ. Սահակ Վ.
Սրապեան, անդ՝ էջ 83:
144 Ասկէրեան, անդ՝ էջ 396:
145 Մէնս. Հավ. 1865, Թ. 614:
146 Հ. Սահ. Վ. Սրապեան, անդ՝ էջ 129:

1874ին Բ. Դրան կողմէ Հասունեան խումբին վեֆիլ (փոխանորդ) կ'ընտրուի, բայց քիչ յետոյ կը հրաժարի¹⁴⁷։

Վիեննայի Միխիլ. Հարց Բանկայթիի վարժարանը 1884ին առաջ քանի մը տարի փակ մնացած էր նիւթական դժուարութիւններու պատճառաւ։ 1884ին կը վերաբացուի վարժարանը Հայ Կաթ. երեւելիներու ձեռնառութեամբ, որոնց մէջ է նաեւ Բուզանդ Թընկերեան¹⁴⁸։

Բուզանդ Թընկերեանի պետական պաշտօններէն կը յիշուի Շիրքէթը հայրիկ նաւաջին ընկերութեան անդամ եղած ըլլալը, որմէ կը հրաժարի 1866ին¹⁴⁹։

Բուզանդ ամուսնացած էր Գրիգոր Եւ Թագուհի Գրիգորեաներու դուստր Տիրուհիի (ծն. 1820 † 1854) հետ, որ վաղամեակի ըլլալով՝ 1854 Մարտ 15ին 34 տարեկան վախճանած է¹⁵⁰։ Այս ամուսնութենէն ծնած է դուստր մը — Սոփի (ծն. 1848 † 1918) — որ 1872 Դեկտ. 3ին կը պսակուի զնոյն Գրիգոր Գրիգոր Պէյ Միմասեանի (ծն. 1840 † 1888) հետ կնքահայրութեամբ Յովսէփ Խիւսափէրտեանի¹⁵¹։

Բուզանդ ունեցած է նաեւ մանչ զաւակ մը՝ Ժոզէֆ (Յովսէփ), որ կը յիշուի իր տիկնոջ հետ 1908ին. «Տէր Եւ Տիկին Ժոզէֆ Բիւզանդ Թընկեր»¹⁵²։ Որքան կ'երեւայ Բուզանդ երկրորդ ամուսնութիւն մը եւս կնքած է առաջինն մահէն վերջ. 1908ին Եւսէֆը փաշայի սգակիրներու ցանկին մէջ կը հանդիպինք հետեւեալին. «... Այրի Տիկին Բ. Թընկեր»¹⁵³։

Դեւոնդի համեմատ Բուզանդ ունեցած է տակաւին 3 զաւակ եւս. Գրիգոր (ծն. 1850 † 1912) որ երկու անգամ ամուսնացած է՝ Տիրուհի Ղազարոսեանի եւ Թագուհի Ղազարոսեանի հետ եւ ունեցած 4 զաւակ։ — Աննա (ծն. 1847 մեռ. 1894) եւ Եւփիմէ (ծն. 1846 մեռ. 1915). վերջինս ամուսնացած է Jean Kalergi ի հետ եւ ունեցած 4 զաւակ եւ 6 թոռ։

Չաւահներէն մին՝ Demetre Kalergi եղած է Յունաստանի արտաքին գործոց նախարար եւ լիպցոր զեսպան Պոլիս (1915—1917) եւ

Հոսմ (1917ին եւ 1923ին), իսկ երկրորդը՝ Jean եղած է յոյն հեծելազորի վաշտապետ։

Դեւոնդ Թընկերեան (Պարիս) Բուզանդի ընտանիքը «ազդեցիկ» կը կոչէ եւ կ'ըսէ որ անոր թոռները ցրուած են ամէն կողմը։

1888ին տակաւին գործունեայ է Բուզանդ¹⁵⁴։ — Մեռած է 1894ին։

4. Արիկի կեանքէն քանի մը գծեր միայն ծանօթ են։ Ծնած է 1808ին։ 1861ին ազգ. յատուկ Յանձնախումբ մը ընտրուած էր, որուն պաշտօնն էր կանոնադրութիւն մը պատրաստել Հայ Կաթ. Ընդհանուր Ժողովքի համար։ Այդ Յանձնախումբի 18 անդամներէն մին է¹⁵⁵։ Մէմ. Հավ. ¹⁵⁶ կ'ըսէ որ քիչ ետք հրաժարեր է։ 1862ին Բարեգործականի Յանձնաժողովի 17 անդամներէն մէկն է¹⁵⁷։ 1864ին Լոնտոնի մէջ Շիրքէթը Մալիէի Օսմանիէ անունով գրամատերական ընկերութիւն մը կը հիմնուի մէկ միլիոն անգլիական ոսկի գրամագլուխով։ Նոյն ընկերութեան համար Պոլսոյ մէջ ներկայացուցչական ժողով մը կազմուելով՝ Արիկ Թընկերեան այս ժողովին անօրէն կ'ընտրուի¹⁵⁸։ Գիչ ետք կը վարձատրուի Մանիէ-Միւրթեմայի զպատուատիւնով¹⁵⁹։ Յաջորդ տարի (1865ին) կը բարձրանայ իր աստիճանը։ Հայ թերթը կը ծանուցանէ. «Կայսերական հրամանագրով միծարգոյ աւարք Թընկերեան Արիկ էֆ. եւ Խրիստաք Զողրաֆօս էֆ., որոնք պատուաւոր սեղանաւորներ են, տէրութեան առաջին կարգի երկրորդ աստիճանի պաշտօնատար անուանուեցան»¹⁶⁰։

1866 Դեկտ. 12ին յանկարծամահ կ'ըլլայ։ Արշ. Արարատեան կ'իմանայ որ «Թընկերեան Արիկ էֆ. կաթողիկէ Հայ գլխաւոր եւ հարուստ սեղանաւորը» կաթուած ստացիր է¹⁶¹։

Թաղման կարգը կը կատարէ նորընտիր Կաթողիկոս Հասունեան Նախագահ։ Մարմինը կը թաղուի Ֆէրիքէօյ, յետոյ Եէնիքէօյ կը փոխադրուի։ Պետութեան կողմէ թաղման առթիւ զրկուած էր վաշտ մը զինուոր։ Ներկայ եղած էին պետական պաշտօնատարներ, 6րդ թաղամասի (Բերա) վարչական

147 Փոլնո, Կ. Պ. 1874, Թ. 863, 869:
148 Արեւիլ, 1884, Թ. 217:
149 Մէմ. Հավ. 1866, Թ. 674:
150 Հ. Յակոբ Բոսեան, անդ. էջ 259:
151 Մէտայր Հազրէթ. Կ. Պ. 1872, էջ 1316:
152 Արեւիլ, 1908, Թ. 6761: — Տիկինն է՝ Euphrosine Maléas (Frosso):
153 Անդ.:

154 Մալիկ, 1888, էջ 1106:
155 Ասկէրեան, անդ. էջ 380:
156 1861, Թ. 387:
157 Մալիս, 1862, Թ. 526:
158 Մէմ. Հավ. 1864, Թ. 555:
159 Արշ. Արարատ. 1864, Թ. 730:
160 Անդ. 1865, Թ. 764:
161 Անդ. 1867, Թ. 795:

կազմը, Հրեայ Համայնքէն երկու խախամ, եւն։

Կը շեշտուի իւր չափազանց մեծ բարեսրտութիւնը¹⁶²։

5. Միքայէլ (Մայքլ) ծնած է 1804ին։ Կը թուի թէ նոյն անձն է Միքայէլ Տիւր Թընկերեանի հետ, որ 1845—1846ին Հասունեանէ Պատրիարքարանի մէջ դատաւորական պաշտօն կ'ընդունի Պօղոս Չամիչեանի հետ¹⁶³։ 1861ին Կաթ. Յանձնախումբի մը անդամ է եւ կը մասնակցի Ազգ. Ժողովին¹⁶⁴։

1865ին 61 տարեկան կը վախճանի։ Թաղուէն վերջ՝ Յովհաննէս Թընկերեան, իր երէց եղբայրը, Բերայի իրենց տան մէջ կ'ընդունի ցաւակցութիւնը Սուլթանի ներկայացուցիչ Ալի Պէյի եւ թուրք նախարարներու¹⁶⁵։

6. Անտոն, Յովսէփ Ամիրա Թընկերեանի կրտսեր որդին եւ ամէնէն հռչակաւորը՝ ծնած է Պոլիս, 1812ին։ Ա. Ս. Sirounian⁶⁶ ծնած է Պոլիս, 1812ին կը գնէ սխարմար։ Անտոն 1908ին 96 տարեկան մեռած է։ Արգ. 1908 — 96 = 1812։ Արգէն Մէմ. Ալիպար¹⁶⁷ եւս Անտոնի ծնունդը 1812ին կը գնէ։

Անտոն՝ իսկացի եւ ուշիմ տղայ՝ քիչ ատենէն մեծ պաշար կ'ամբարէ գանազան զիտութիւններու եւ բազմաթիւ օտար լեզուներու ուսումով։ Հայերէնէ զատ ուսած էր թրքերէն, ֆրանսերէն, իտալերէն եւ յունարէն։ Հօր մահէն վերջ շարունակած է իր ուսումը եւ ջանացած՝ կատարելագործելու զայն։

24 տարեկան էր, երբ կը մտնէ թուրք պետական ծառայութեան մէջ։ Բ. Դրան գաղտնի ծառայութեան մէջ ատեն մը գործելէ նազան ճիւղերու մէջ ատեն մը գործելէ վերջ՝ կը գնահատուի իր կարողութիւնն ու ճարտարութիւնը։ 1846ին Պարիսի զեսպան Սուլթան փաշայի թարգման կ'անուանուի։ 1850ին Բ. Դրան թարգմանութեան ճիւղի գրասենեակի պաշտօնեայ է։ 1851ին կրկին անգամ Սուլթան փաշայի քով թարգմանութեան ու քարտուղարութեան կը կոչուի։ 1852ին կ'անուանուի թարգման Եղէտիկան կրկիններու վալի Մուսա Սաֆէթի փաշայի։

162 Մէմ. Հավ. 1866, Թ. 675: — Փոլնո, 1866, Թ. 152:
163 Ասկէրեան, անդ. էջ 58—59:
164 Մէմ. Հավ. 1861, Թ. 387:
165 Անդ. 1865, Թ. 627:
166 Son Excellence Yaver Pacha Tinghir. Venise 1902, էջ 7:
167 1908, Թ. 4550:

Նոյն տարի կայսերական շոգենաւորութեան մէջ պաշտօն կը ստանայ։ Այս առթիւ կը գրէ Նայեան Աղաւնի (1852, Թ. 17). «Կայսերական նաւարանի շոգենաւորուն կառավարութեանը մէջ Թընկերեան Մեծապատիւ Անտոն ազալին ըրած բարեջան ծառայութիւնները վարձատրելու համար Բարձ. մեծ ծովապետը մօտերս հրաման տուաւ որ ծովային զօրաց գնդապետի միաձեւ զգեստը հագնի»։

Անտոն Թընկերեանի ծառայութիւնները վարձատրուելով՝ Իֆթիխարի նշան կը ստուի։ 1854ին առաջ ստացած էր արգէն Պէյ տիտղոսը, իսկ պատերազմական նախարարութիւնը մասնաւոր պատիւ մ'ընելու համար կու տայ նոյն տարի նաեւ Եւսէֆ տիտղոսը, որ թիկնապահի նշանակութիւն ունի։ 1855ին ծովային տեղակալի (Գաշմազամ) աստիճանը կը ստանայ՝ արեւելեան բանակներու արտաքին թղթակցութեանց զիւանին անօրէնի պաշտօնով։

Պատերազմական նախարարութեան մէջ ծառայած ըլլալով՝ իր արտակարգ կարողութիւնները կը գնահատուին Սուլթանէն, որ կը շնորհէ անոր Ծովային գնդապետութեան (Միւրալայ) աստիճանը¹⁶⁸, պատուելով զինքը միեւնոյն ատեն Մէմիսիէ Գ. կարգի պատուանշանով։

1855—1856ին իրեն կը յանձնուի շոգենաւորութեան ընդհանուր վարչութիւնը եւ նաւարաններու վերատեսչութիւնը¹⁶⁹։ Կը կազմակերպէ առեւտրական շոգենաւորութեան համար նոր եկամուտներ կը գտնէ ու երկրին առեւտրական վիճակը — վաճառականութիւնը — կը բարձրացնէ։ Եւրոպա¹⁷⁰ կը թիւնը — կը բարձրացնէ։ Եւրոպա կը գրէ որ «Սարգինիայի թագաւորը... Թընկերեան Ա. Եւսէֆ Պէյին Ս. Մարիտիմի կըրեան Ա. Եւսէֆ Պէյին Ս. Մարիտիմի կըրեան Ա. Ղազարի կարգին պաշտօնակալի շքանշան Ս. Ղազարի կարգին պաշտօնակալի շքանշանը շնորհէր է»։ 1856ին կը ստանայ նաեւ Սուտորիոյ Լեոպոլդի կարգի պատուանշանը։

Վերջին պաշտօնէն կը հրաժարի 1857ին¹⁷¹։ Արշալայս Արարատեան¹⁷² նոյն տարին կը ծանուցանէ որ «Կայսերական հրովարտական Եւսէֆ Պէյ» որ պատերազմի պաշտօնարանը օտար լեզուով եղած թղթակցութեանց տե-

168 Մէմ. Հավախ, 1855, Թ. 69:
169 Եւրոպա, Վիեննա 1856, Թ. 5:
170 Անդ. Թ. 28:
171 Մէմ. Հավ. 1857, Թ. 176:
172 1857, Թ. 559: — Հմմտ. Մասեայ Աղաւնի, Պարիս 1858, էջ 84:

հինգ տարի ալ կ'ապրի, սակայն յառաջուան միշտ սիրալիք եւ անոյշ ժպիտ ունեցող դէմքը՝ մնայուն տխրութեամբ մը կը համարուի: Իր մօտ դար մը տեւող կեանքը տուկացած էր զժուարութիւններու, յոգնութիւններու, կեանքի տաղտուկի եւ իր եղբայրներու եւ քոյրերու սուգին, բայց իր



Ա. Եավէր Փաշա Թրնկըրեան

կեանքի ընկերով կորուստին առջեւ կը խորտակուի:

1908 Ապրիլ 11 թիւով կը գուժէր Մէքմ. Ախպար մահը Վսեմ. Եավէր Փաշա Թրնկըրեանի, անձ մը, որ պատիւ բերած էր ոչ միայն Օսմանեան Կայսրութեան, այլեւ իր Ազգին ու Համայնքին:

Իր թաղումը կ'ըլլայ աննախընթաց շուրով¹⁹², հանդիսադրութեամբ Սապագեան Կաթողիկոս-Պատրիարքի, Միքայէլ Եպ. Խաչատուրեանի եւ Մատթէոս Եպ. Սրբեանի ատրիբերակցութեամբ եւ 24 վարդապետներու մասնակցութեամբ: Ներդաշնակ Երգեցողութիւնները տեղի կ'ունենան Ս. Յովհ. Ս.

Ոսկերեանի երգեցիկ մանուկներու կողմէ՝ առաջնորդութեամբ Երաժշտապետ Ներսէս Խլատովէրտեանի: Թաղման ներկայ եղող պետական, օտար եւ ազգային մեծամեծներէն յիշենք միայն քանի մը անուն. Անտոն Փաշա Նաֆթիլեան, Ապարիլ Բէրիմ Փաշա, Փաւլաքի Փաշա, Տրդատ Պէյ Տատեան, Բողոքականներու Ազգապետ՝ Յակոբ Պօյաճեան, Յոյն Պատրիարքարանի Մեծ Լոյսթիւթ Արիթթարքի Պէյ, Յրանսական ղեկավարաւորութեան ղեկավար Մ. Cuiller եւ հետադրական ու թղթատարական վարչութեան, թուրք եւ օտար դրամատուներու ներկայացուցիչներ, Եւայն Եւայն:

Անտոն Ալիք իր դամբանականին խօսքերը կը խոստանէր ընդգծելով թէ. «Եավէր Փաշա թէ՛ նախարարներու եւ թէ՛ աղքատներու հետ կենցաղավարած ըլլալով՝ ոչ մէկուն ցաւ պատճառած էր: Երբեք չէ ուղած պատիւներով ու փառքերով փառաւորուիլ: Աջ ձեռքին տուածը՝ չէր գիտեր ձախը»:

Մարմինը կը թաղուի իր շինած դամբարանին մէջ, կից Ս. Անտոն եկեղեցւոյ, ուր կը հանգչէր իր կեանքի ընկերին՝ Տիկին Ծաննիի մարմինը: Այդ դամբարան-չիրիմը կը գտնուի Բոսփորի գեղեցիկ ափերէն մէկուն վրայ, բլուրի մը դադաթը, ծառերով ու ծաղիկներով զարդարուն, մարդերէ ու քաղաքի ժխորէն հեռու վայր մը:

Եավէր Փաշա կը մեռնի 96 տարեկան: Հակառակ այդքան յառաջացած տարիքին՝ խելքը գլուխն էր, մարմնոյն այժմ տեղը: Կնոջ մահէն առաջ առողջ եւ գրեթէ երեսասարդական աւին ունեցած է: Ժամանակակից թերթը գինքը կը ներկայացնէ «նուրբ, ազնիւ, հիւրասէր եւ ամէն մարդու հետ գեղեցիկ վարուելակերպ ունեցող անձ»¹⁹³:

Ամէն պարագայի՝ Թրնկըրեան Գերդաստանի ամէնէն մեծ դէմքերէն մին է Եավէր Փաշա. իր պատուոյ եւ փառքի ատրիճանովը՝ մեծազոյնը:

Եավէր Փաշա Թրնկըրեանի լուսանկարը հրատարակուած է զանազան տեղեր. Թէոզիկ¹⁹⁴ տուած է Տէր եւ Տիկին Եավէր Փաշա ամուլը՝ 1860ական թուականներուն. Al. P. Sirounian¹⁹⁵ Եավէր Փաշան 1902ին, Եւն: Մենք կը ներկայացնենք 1904ի իր մէկ լու-

¹⁹² Ընդարձակօրէն նկարագրուած է Մէքմ. Ախպարի (1908, թ. 4551) եւ Արեւիլի (1908, թ. 6761) մէջ:

¹⁹³ Մէքմ. Ախպար, 1908, թ. 4550—4551: — Արեւիլի, 1908, թ. 6758:
¹⁹⁴ Ամէնուն Տարեցոյցը, 1912, էջ 271:
¹⁹⁵ Անդ՝ էջ 6:

սանկարը, զոր կը գտնենք Վիեննայի մեր Թանգարանի ազգային գէմքերու բաժնին մէջ: Այս լուսանկարը խօսուն պատկերն է գերագոյն համեստութեան մը՝ իր ա՛յնքան մեծութեան մէջ: Իր ստացած աւելի քան տասնեակ բարձր պատուանշաններէն եւ ոչ մէկը կը զարդարէ իր ազնուական կուրծքը:

7. Յովսէփ Ամիրա Թրնկըրեանի դուստրներէն Աոֆի (1805 † 1885) ամուսնացած է Ազնաւորեանի մը հետ եւ ունեցած էրկու մանչ. Սէրափէն եւ Անտոն, որոնց Եւս մուսնացած է Անտոնի զաւակներ ունեցած ԸՄԱՐԸ կը յիշուի¹⁹⁶:

8. Տիրուի Թրնկըրեան կը յիշուի Մէքմ. Ախպարէն (1908, թ. 4550) իբր ութերորդ զաւակը Յովսէփ Ամիրայի: Այս անունով երկու անձի տապանադիր կոյ. մին՝ Թրնկըր Տիրուի, ծնած 1817ին եւ վախճանած 1911 Տիրուի, ծնած 1817ին եւ վախճանած 1911 Մայիս 5ին¹⁹⁷: Իսկ միւսը՝ Տիրուի Թրնկըրեան, վախճանած 1894 Փետր. 14ին¹⁹⁸: կըրեան, վախճանած 1894 Փետր. 14ին¹⁹⁸: Թէ ասոնցմէ ո՞րն է Յովսէփ Ամիրայի աղջիկը՝ չենք կրնար վճռել: Հասանարար վերջինը: Եթէ ասոնցմէ ԸՄԱՐԸ՝ Եավէր Փաշայի ընդարձակ մահազոյն մէջ¹⁹⁹ յիշուած ԸՄԱՐԸ կը 1908ին, զոր չենք գտնիր: Ղեւոնդ Թրնկըրեան (Պարիս) Յովսէփ Ամիրայի ութերորդ զաւակը կը կոչէ Մարի (1797 † 1888), որուն մասին չունի անդրազոյն տեղեկութիւն:

9. Թագուհիի մասին ծանօթութիւն կը պակսի: Մեռած է 1895ին:

10. Թերեզ, Յովսէփ Ամիրայի կրտսեր դուստրը 1827 Հոկտեմբերին տասը ամիս է վերահանող ըլլալուն՝ քսորքէ կ'ազատուի: Իր տեղ քսորքէ կ'երթայ իր մօրաքոյրը²⁰⁰: Իր մասին ուրիշ տեղեկութիւն չունինք: Մեռած է 1899ին:

6. ԱՍՏՈՒԱՅՍՏՈՒՐ ԹՐՆԿՐԵԱՆԻ ՏՈՂՈՒՄԱՌԸ
Պարիսաբնակ Պր. Ղեւոնդ Թրնկըրեանի համեմատ Կարապետի որդի՝ Աստուածատուր (Ասատուր) ունեցած է 9 զաւակ. Յովհաննէս, Մարիամ, Թագուհի, Սրբուհի, Կարապետ, Մարիամ, Յովսէփ, Կատարիկէ եւ Գրիգոր, Անտոն, Յովսէփ, Կատարիկէ եւ Պօղոս: 1. Յովհաննէս մեռած է 1858ին,

2. Մարիամ՝ 1856ին, 3. Թագուհի՝ 1848ին, 4. Սրբուհի՝ 1849ին, 5. Գրիգոր՝ 1854 Ապրիլ 4ին: Գրիգորի անուն կը հանդիպինք 1838ի Հայ Կաթ. երկրորդ նախագահի ընտրութեան Ժողովքի մասնակցողներու ցանկին մէջ, ուր ստորագրած է. Գրիգոր Թրնկըր Աստուածատուրեան²⁰¹: 6. Անտոնի մահուան թուականը անծանօթ է, 7. Յովսէփ՝ ծնած է 1801ին, մեռած՝ 1863 Յուլիս 29ին, 8. Կատարիկէի մահուան թուականը անծանօթ է, 9. Պօղոսի մասին ունինք հետեւեալ տեղեկութիւնները. ծնած է 1799ին եւ մեռած՝ 1869 Նոյեմբ. 14ին: Պօղոս ամուսնացած է 1847 Յունուար 21ին Յուլիանէ Բեքմեքեանի (ծն. 1822, մեռած 1869) հետ, որմէ ունեցած է 10 զաւակ. Տիրուի, Գրիգոր, Ասատուր, Յովհ. Մկրտիչ, Թագուհի, Սրբուհի, Մարի, Յովհաննէս, իններորդը անծանօթ՝ եւ Անտոն: Տիրուի (ծն. 1854ին, մեռ. 1923ին) ամուսնացած է Գեորգ Սինապեանի հետ եւ ունեցած 2 աղջիկ. Սոֆիա (մեռ. 1934ին) եւ Ճիւլիանէ. Գրիգոր (ծն. 1855ին, մեռ. 1914ին) ամուսնացած է Մարի Ասիկարի հետ եւ ունեցած 2 որդի (?), որոնք Ասիկարի հետ եւ ունեցած 2 որդի (?), որոնք 1908ին կը յիշուին. «Տեաք Բազալ եւ Ժան Գ. Բրնկըր»²⁰². Ըստ Ղեւոնդի՝ ասոնք ունեցած են դուստր մը՝ Սրբուհի (ծն. 1872ին). Ասատուր (ծն. 1851ին) Պոլսոյ 1896ի Հայոց ջարդին զոհ եղած է, մեռելով 1896 Օգոստոս 26ին. Յովհ. Մկրտիչ մեռած է 1857ին: Թագուհի ծնած է 1848ին, Սրբուհի՝ 1849ին, Մարի՝ 1856ին, Յովհաննէս՝ 1858ին: Անտոն (ծն. 1851ին, մեռ. 1925ին) աշակերտած է Պոլսոյ Վիենն. Միխիլ. Բերա-Բանկայթիի վարժարանին: 1864ին նոյն վարժարանի Գ. վարժարանի աշակերտ է²⁰³. 1865ին անցած է զատարանի աշակերտ²⁰⁴. 1894 Փետր. 13ին արդէն Ե. դատարանը²⁰⁴. 1894 Փետր. 13ին կ'ամուսնանայ Սրբուհի Կիւզլեանի (ծն. 1867 Ապրիլ 10ին, մեռ. 1919ին) հետ եւ կ'ունեցայ 2 զաւակ. Կատարիկէ (ծն. 1895 Փետր. 3ին, մեռ. 1913 Մայիս 24ին) եւ Պօղոս:

Անտոն Թրնկըրեան, իբրեւ մասնագէտ թրքերէնի, երկար ատեն թրքերէնի ուսուցիչ եղած է Պոլսոյ Վիենն. Միխիլարեանց Բանկայթիի վարժարանին եւ Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանին մէջ: Գեորգ Սինապեանի հետ Պոլսոյ մէջ հրատարակած են

¹⁹⁶ Մէքմ. Ախպար, 1908, թ. 4551: — Հմմտ. Արեւիլի, 1908, թ. 6761:
¹⁹⁷ Հ. Յակոբ վ. Գոսեան, անդ՝ էջ 146:
¹⁹⁸ Անդ՝ էջ 95:
¹⁹⁹ Մէքմ. Ախպար, անդ՝ թ. 4551:
²⁰⁰ Գր. Վիենն. Միխիլ, 1827 Հոկտ. 25:

²⁰¹ Ասիկարեան, անդ՝ էջ 42:
²⁰² Մէքմ. Ա. թ. 4551: — Արեւիլի, թ. 6761:
²⁰³ Մէքմ. Հավ. 1864, թ. 537:
²⁰⁴ Անդ՝ 1865, թ. 581:

Ֆրանսերէն-թրքերէն մասնագիտական բառարան մը սա վերնագրով. Dictionnaire français-turc des Termes Techniques des sciences, des lettres et des arts: Բառարանը երկու հատորէ կը բաղկանայ. Ա. Հատորը կը բովանդակէ A—H եւ սպուած է 1891ին, իսկ Բ. հատորը՝ J—Z սպուած է 1892—1896ին:

Անտոն Թընկերեանի միակ մանչ դասակը՝ Պոլսո՝ ծնած է Պոլիս 1901 Յունիս 10ին. աշակերտած է Պոլսոյ Վիենն. Միւթարեանց, 1929էն ի վեր հաստատուած է Վիեննայի մէջ: 1927 Սեպտ. 21ին ամուսնացած է Paula Wolfի հետ:

Անտոն Թընկերեանի ընտանեկան տապանագիրը կայ, որ կը կրէ «Գերդաստան Թընկեր Անտոնի» վերաանութիւնը: Հոս «Գերդաստան» ընտանիք խմատով գործածուած է եւ ասոր անուններու ցանկին մէջ կը գտնենք նաեւ «Գրիգոր Թընկեր», որ Անտոնի եղբայրն է: Որքան կ'երեւայ՝ Գրիգոր՝ Անտոնի ընտանեկան գամբարանին մէջ թաղուած է եւ այս պատճառաւ գրութեան մէջ «Գերդաստան» բացատրութիւնը գործածուած:

Ահա այդ տապանագիրը.

- Գերդաստան
- Թընկեր Անտոնի
- Գաբէրին Թընկեր
- 1895—1913
- Գրիգոր Թընկեր
- 1856—1914
- Սուրբիկ Թընկեր
- 1867—1919
- Անտոն Թընկեր
- 1851—1925²⁰⁵:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

ՎՈՍՏԵՆՓՆՈՒՊՈՂՍՈՑ ՀԵՅՈՑ ՊԵՏՐՈՒՆԵՐԻ ԹԵՆ ՍԿՋՐՆԵՐՈՒ ՈՒԹԻՒՆԵՐ

ՄԵՐՏԻՐՈՍ ԵՒ ՅՈՎԸԿԻՄ ԵՊԻՍԿՈՍՆԵՐ

Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ. 500, հետեւելով մեզի անձանօթ աղբիւրի մը, կը պատմէ թէ Մուհամեա սուլտան ի Պրուսա պատահելով Հայոց Յովակիմ կախկոպոսի, կը խոստանայ թէ ինքը երբ նուաձէ Կոստանդնուպոլիսը, Հայերու առաջնորդութիւնը պիտի յանձնէ անոր: 1453ին տէր կ'ըլլայ սուլտանը Կ. Պոլսոյ. եւ ըստ խոստման ԶԺ (1461) թուին «Յովակիմ կախկոպոս արքունի նամակաւ կացուցեալ առաջնորդ՝ կոչեաց զնա փաթրիկ, այսինքն պատրիարք, առեալ նմա իշխանութիւն տիրելոյ ի վերայ Հայոց եղելոց ի Յունաստան եւ յԱնատոլիա»:

Ո՞վ էր Յովակիմ կախկոպոս: Իր մասին ունինք հետեւեալ Յիշատակարանները:

ա. Բասիլէայի Սիւնհոգոսին Հարք 1433ին հրաւիրանայ թուղթ մը կ'ուղարկեն Կ. Պոլիս գտնուող Յովհաննէս եւ Եսայի հայ արքեպիսկոպոսներու: Թուղթին կը պատասխանէ Յովհաննէս կախկոպոսը: Այս նամակը պահուած է մեզի միայն լատիներէն թարգմանութեամբ¹: Հոս կ'ըսուի. «Տեսչիք Հարք, զի մեք, Յովհաննէս կախկոպոս՝ կարգեալ ի Կաթողիկոսէ մերմէ ամենայն Հայոց ի կողմանս Կոստանդնուպոլիսի, եւ Եսայի կախկոպոս ի նմին քաղաքի եղեալ ի հոգարարձութիւն եկեղեցոյ Հայոց . . .»: Եւզինիոս Դ. քահանայապետը հրաւիրանայ թուղթ մը կը գրէ Սիւն կաթողիկոսին. որուն կը պատասխանէ Եսայի կախկոպոս 1434ին, ստորագրած «Եսայիա Երուսաղէմի» (Պալճեան, 80—85): 1438, յուլիս 25ին Կոստանդին Վահագնի կաթողիկոս կը գրէ թուղթ մը Թէոդոսիայի Սարգիս վարդապետին եւ ժողովուրդին եւ կղերիկոսներուն, եւ կը յայտարարէ. «Ես իմով լի եւ կատարեալ ճոխութեամբ ետու իշխանութիւն Սարգիս վարդապետի, որ է եւ եղիցի փոխանակ անձին իմոյ, ընդ նմին եւ Մարկոսի եւ Թովմայի վարդապետաց եւ Յովակիմայ կախկոպոսի Բերիայ (լատ. Perae), զի երթիցեն ի ժո-

¹ Աղբիւրանք Վ. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայոց, Վիեննա 1878, էջ 31 եւ շար.: A. Bolgy, Historic doctrinae catholicae inter Armenos, Viennae 1876, p. 88 ss.

²⁰⁵ Հ. Յակոբ Վ. Բաւան, Գերեզմանատուն Կաթ. Հայոց, անդ՝ էջ 111:

ղովս» (Պալճեան, 88, 89): Հայ դեսպանութիւնը զնայ Փլորենտիա, ուր փոխադրուած էր Սիւնհոգոսը. անոնք հոն էին դեռ 1439, էր նոյեմբեր 22: Թէ Յովհաննէս կախկոպոս անոնց թուին մէջ էր, մասնաւորապէս չի յուշիր:

Թղթերու հայերէն բնագիրները չեն պահուած. լատիներէնի թարգմանիչը արարախոս հայերէնագէտ մ'ըղած կ'երեւայ, որ Սարգիս Sergis, Մարկոս Marchos, Յովակիմ Joakim եւ վարդապետ vertebet տառադարձած է: Այսպէս նաեւ Բերա՝ կամ Բերիա տառադարձուած է Pera (սեռ. Perae): Պալճեան թարգմանած է ճշդիւ «Բերիա» այն Պալճեան թարգմանած է ճշդիւ «Բերիա» այն է Հալէպ: Ինչպէս Եսայի կախկոպոս իր անուն կից ստորագրած է «Երուսաղէմի», այսինքն կախկոպոս Երուսաղէմի, նոյնպէս Յովակիմ ձեռնադրուած Հալէպի թեմի վրայ՝ կը գործէր պաշտօնով Կ. Պոլիս: Ուստի սխալ է Perae անունն տակ փերա (Կ. Պոլսոյ) թաղամասն իմանալ³: Ինչպէս յետագայ Յիշատակարաններէն պիտի տեսնուի, Յովակիմ իր գործունէութեան ասպարէզի վրայ կը նկատուէր (արք.) կախկոպոս Կ. Պոլսոյ:

Փլորենտեան ժողովին ուղարկուած հայ պատգամաւորներուն հետ կային ուրիշ կցորդներ ալ, որոնք չէին յիշուած Կոստանդին կաթողիկոսի Թղթին մէջ, այսպէս «Ներսէս ի Հայոց» (Պալճ. 134): Եւզինիոս Դ. ի համարաւոր Թուղթին հայերէն թարգմանութեան բաւաւոր Թուղթին հայերէն թարգմանութեան մաս վարդապետները, համակախօսէր իրեն Կոստանդին կաթողիկոսի յանուանէ ներկայացուցիչ դեսպաններ:

բ. «Գրեցաւ Գիրքս ձեռնադրութեան թվ. ՊՁԷ (1438) ի վայելումն արհիպիսկոպոսին տէր Յովակիմին Կոստանդնուպոլիսի»։ Գրեւն է Յակոբ Տրապիզոնցի արեղայց (Հանդ. Ամս. 1924, էջ 435—436):

գ. Քէօթահայի Ս. Աստուածածին եկեղեցոյ Յիշատակաց Մատենին մէջ կ'ըսուի թէ «հաստատեցաւ Յիշատակարանս այս ի թվին ՊՂԴ (1445) ամին ի հայրապետութեան»:

² Բերիա, յն. Βέροια, Ասորոց Հալպ, Հալէպ քաղաքին անունն է այն մասնագիրներու քով, զոր նաեւ Հայերը սիրած են գործածել՝ Բերիա, Բերա, Իրերիա, Եվերիա, Տիբերիա ուղղագրութեամբ եւ սխալագրութեամբ (սեռ Սիւրմէան, Պատմութիւն Հայոց, Գ. 1, էջ 26, 158, 181 216 եւն):

³ Այսպէս ուղղելու է ինչ որ գրած էմ Հանդ. Ամս. 1935, էջ 38. ծան. 7. ուստի համաձայն Չամչեանի, Պալճեանի եւ Գալէմֆեարեանի:

արն. Կարապետին եւ յեպիսկոպոսութեան տեսոն Ովակիմայ եւ երեսփոխանութեան Յակոբին» (Հայաստանի Կոչնակ, 1951, էջ 946):

դ. Ամիրտովլաթ Ամասիացի իր Օգուս բժշկութեան բժշկարանը նոր խմբագրութեամբ լոյս ընծայեց 1469 դեկտեմբեր 25ին «ի կաթողիկոսութեան տէր Յովակիմին» ի Փլորիպէ (էջ 8 տպ. Մալխասեան):

Տեսանք, որ 1433ին կային Կոստանդնուպոլիս երկու կախկոպոսներ Յովհաննէս եւ Եսայի: Առաջինը պաշտօն ունէր հովուել ի կողմանս Կ. Պոլսոյ գտնուող բոլոր Հայերը, իսկ Եսայի կարգուած էր Կ. Պոլսոյ Հայոց (Ս. Ստեփանոս) եկեղեցոյն հոգաբարձու: Այս երկու կախկոպոսները կ'երեւայ թէ ես կանչուած են 1434ին ետքը եւ անոնց տեղ ուղարկուած՝ առաջոյն փոխարէն Յովակիմ, եւ երկրորդին տեղ Մարտիրոս: Վերջինս կը յիշուի 1459ին իրրեւ «հայրապետ», մինչ Յովակիմ կը շարունակէ իր «կախկոպոսութիւնը»:

Ամիրտովլաթ Ամասիացի իր Օգուս բժշկութեան բժշկարանին առաջին խմբագրութիւնը ի գլուխ կը հանէ այդ տարւոյն, որուն կը կցէ Յիշատակարանս.

«Գրեցաւ թաղաւորական Բժշկարանս ի թուակնութեանն Հայոց ՁԸ (1459) ամին, ի նոյեմբերի ամսոն ի Գ. օրն շարաթ⁴. եւ ի քաղաքին Կոստանդինոյպոլիսի եւ ի յառյտան վանիցն սուրբ Ստեփաննոսի, եւ ի կաթողիկոսութեանն Հայոց տէր Գրիգորոյ եւ ի հայրապետութեանն տէր Մարտիրոսին Կոստանդինոյպոլիսի վիճակին եւ պարտութեան Մուհամադ խանին եւ ի վայելումն պարոն Շատինպէկին⁵ որդոյն պր. Վարդին . . . յիշեցէք . . . գանարժան գծոյն զԱմիրտովլայ թիշկին Ամասիո» (Ամիրտովլաթ, Օգուս բժշկութեան, Երևան 1940, էջ ԻԳ—ԻԴ):

Յիշատակարանիս «ի հայրապետութեան» ասութիւնը կը թուի ինձ թէ իմանալու է «հայրապետ — պատրիարք — փաթրիկ»: Կը շեշտուի «Կոստանդինոյպոլիսի վիճակին»: Մարտիրոսի անունը առաջին եւ վերջին անգամ այստեղ կը յիշուի:

⁴ ձեղք՝ 1459 տարւոյ համար:

⁵ «Շատինպէկ» կը փրկանաւորէ յայտադեպ Աւետարան մը 1430ին. Արարատ 1910, էջ 537: